«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**Թեմա՝**

Սաների հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը

**Դաստիարակ՝** Ռիմա Հովհաննիսյան

**Մանկապարտեզ՝** <<Թթուջուր գյուղի մսուր -մանկապարտեզ>>

**2023թ.**

# Բովանդակություն

Ներածություն----------3
Գլուխ առաջին----------.4
Գլուխ երկրորդ----------6
Պարապմունքի պլան----------6
Եզրակացություն----------13
Օգտագործված գրականություն.....15

## Ներածություն

- Հայրենիքից զատ, Հայրենիքից դուրս ինձ համար խաբուսիկ են բոլոր դրախտները:

**Գարեգին Նժդեհ**

- Սերը դեպի հայրենիք քաղաքակիրթ մարդու առաջին արժանիքն է:

**Նապոլեոն I**

- Չկա ոչինչ հայրենիքից առավել սիրելի:

**Լուկիանոս**

Հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը երեխաների ունեցած գիտելիքները կյանքի հետ կապելու, առօրյա կյանքում դրանք կիրառելու, տրամաբանությունը զարգացնելու և ընդհանրապես աշխարհաճանաչողության սահմաններն ընդարձակելու մեջ է:Հայրենասիրությունը սկսվում է հայրենաճանաչողությունից:Մեր կարևորագույն խնդիրներից մեկն է դեռևս նախադպրոցական տարիքից երեխաների մեջ սերմանել հայրենասիրություն և նրանց դաստիարակել որպես հայրենասեր մարդ:Այդ ճանապարհին մեք պետք է նրանց մեջ սեր արթնացնենք հայրենիքի,քաղաքի,հայրենի բնության հանդեպ:Երեխաները պետք է սիրեն իրենց շրջապատող աշխարհը,իրենց հայրենիքը,և դա պետք է սկսվի ընտանիքում և նախադպրոցական հաստատություններում:

## ԳԼՈՒԽ 1

## Հայրենասիրության դաստիարակության նպատակը

Հայրենասիրական դաստիարակությունն արտահայտվում է հայրենիքի հանդեպ սիրով և նիրվածությամբ։

Նախադպրոցական տարիքի երեխաների մոտ առկա են հայրենասիրական դաստիարակության հետ կապված մի շարք խնդիրներ։

Նախ պետք է հաշվի առնենք ,որ երեխաները յուրովի են տեսնում և զգում իրենց շրջապատող աշխարհը։Եվ մեր աճող սերնդի դաստիարակությունը պետք է սկսվի սիրո ցուցաբերմամբ  իր ընտանիքի ,բակի,մանկապարտեզի,երկրի նկատմամբ։Մենք պետք է սովորեցնենք երեխաներին դեռ փոքր տարիքից նվիրվող և պատասխանատու լինել ինչպես հարազատ մարդկանց,այնպես էլ հարազատ երկրի նկատմամբ։Ծնողը և դաստիարակը պարտավոր են համատեղ ջանքերի շնորհիվ հասնել հայրենասիրական դաստիարակության։Որի շնորհիվ էլ կունենանք արժանապատիվ և հայրենասեր սերունդ։Երեխայի աշխարհայացքը հաշվի առնելով,և համակարգված աշխատանքով հնարավոր է հասնել ցանկալի արդյունքի։Այդ ճանապարհին կարևոր և արդյունավետ է տարբեր էքսկուրսիաների,դիտումների,զբոսանքների կազմակերպումը։

Հայրենաճանաչողությունը սկիզբ է առնում մեր ընտանիքից, բակից, այգուց, դպրոցից, քաղաքից և տարածվում է մինչև մեր հայրենիքի հեռավոր անկյուններ։

Բարոյական դաստիարակության նպատակը անձի բարոյական զարգացումն ու ձևավորումն է, իսկ երեխայի սոցիալական զարգացման մեջ առաջատար տեղը զբաղեցնում է իր ժողովրդի բարոյական արժեքների յուրացումը և հետագայում մարդկային համընդհանուր բարոյական արժեքների ճանաչումն  ու յուրացումը։

Մանկապարտեզի և ընտանիքի միջև սերտ կապի հաստատմամբ,հայրենասիրական զգացմունքների ձևավորումն ավելի արդյունավետ է դառնում։ Հայրենասիրությունը ենթադրում է մարդու դրական հատկանիշերի համալիր ձևավորում և զարգացում։ Նրա հիմքում ընկած են հոգևոր-բարոյական և սոցիալ-մշակութային բաղադրատարրեր։ Հայրենասիրությունը հանդես է գալիս հայրենիքի հետ իր անբաժանելի լինելն ու միասնականությունը գիտակցող անձի հոգևոր արժեքների, քաղաքացիականության և սոցիալական ակտիվության հետ միասին։ Հայրենասիրությունը, եթե նկատի ունենանք ծագումը, առաջանում և զարգանում է որպես զգացմունք, որն ավելի ու ավելի է սոցիալականացվում և վեր հառնում հոգևոր-բարոյական հարստացման միջոցով։ Հայրենասիրական զգացմունքի ըմբռնումը անբաժանելիորեն կապված է նրա

գործունեության հետ, ինչն առավել կոնկրետ պլանով դրսևորվում է ակտիվ սոցիալական գործունեությամբ, գործողություններով և արարքներով, որ կատարվում են մարդու կողմից՝ ի բարօրություն հայրենիքի:Էությամբ այն միասնական է, բայց միևնույն ժամանակ բազմաբնույթ է իր դրսևոումներում: Սակայն առ այսօր դեռ չի ձևավորվել միասնական, բոլորի կողմից ընդունելի կարծիք, թե ինչ պետք է հասկանալ հայրենասիրություն ասելով:

Հայրենաճանաչողության ճանապարհին մանկապարտեզի կողմից պետք է ծնողները դիտարկվեն որպես երեխայի անհատականության ձևավորման իրավահավասար մասնակիցներ:

1.2 Նախադպրոցականների հայրենասիրական ճանաչողության մեթոդները

Հայրենաճանաչողության դաստիարակության նպատակն է՝ կրթել հայրենասեր,ով սիրում է իր հայրենիքը,հավատարիմ է հայրենիքին,պատրաստ է ծառայել և պաշտպանել իր հայրենիքը:Վերջինով պայմանավորված,երեխաների հայրենաճանաչողության դաստիարակությունը նախադպրոցական ուսումնական հաստատության հիմնական խնդիրներից է հանդիսանում:Այս նպատակին ուղղված կարող ենք առանձնացնել մի քանի կետ.

Երեխայի մոտ բարձրացնել սիրո զգացումը իր ընտանիքի,տան,մանկապարտեզի,քաղաքի կամ գյուղի նկատմամբ:

Երեխաների ծանոթացում պետության խորհրդանիշներին;

Երեխաների տեղեկացվածությունը սեփական արմատների մասին:

Էքսկուրսիաների կազմակերպում դեպի մշակութային վայրեր:

Այս ամենը կարող ենք կազմակերպել ,խմբասենյակում և խմբասենյակից դուրս:

Սաների մոտ հայրենաճանաչողության դաստիարակությունըհանդիսանում է մանկավարժական բարդ գործընթաց;Այն հիմնվում է՝որպես անհատական որակի ձևավորման:Յուրաքանչյուր տարիքային փուլում հայրենաճանաչողության և հայրենասիրական դաստիարակության դրսևորումներն ունեն իրեն առանձնահատկությունները:

Ասելով հայրենաճանաչողության դաստիարակություն,հասկանում ենք մեծահասակի և երեխաների փոխհամագործակցությունը համատեղ գործունեության և հաղորդակցության մեջ,որն ուղղված է երեխայի մեջ մարդու համընդհանուր բարոյանա որակների բացահայտմանն ու ձևավորմանը:Այս փուլում արդյունավետ է նաև դաստիարակի անձնական օրինակը և աշխարհայացքը:

Մենք պետք է երեխաների մեջ սեր սերմանենք հայրենիքի նկատմամբ,այն նրանց մոտ ցույց տալով գեղեցիկ և դրական կողմերով,որպեսզի երեխաները ձգտեն դեպի հայրենիք և

սիրեն այն։Եվ միշտ հիշենք ,որ երեխան պետք է սկսի սիրել իր շշրջապատող մարդկանց ,ընտանիքի անդամներին ,հարգի նրանց,որպեսզի կարողանա սիրել իր հայրենիքը և գնահատի այն։

Երեխան պետք է զգա որ վերջիններս հենց իր հայրենիքի մի մասն են կազմում ,և հարգանքն ու սերն է ձևավորում նաև իր աշխարհայացքը։

## Գլուխ 2

Հայրենաճանաչողության դաստիարակության կազմակերպումը ուսումնական հաստատություններում

Հետազոտության ժամանակ կիրառել եմ ԽԻԿ համակարգը ՝ կրտսեր երկրորդ խմբի երեխաների հետ։

Աշխատանքս պլանավորել եմ համալիր ծրագրով ,հաշվի եմ առել չափորոշչային տարիքային զարգացման ոլորտը։

Պարապմունքը արձանագրվել է մեթոդիստի կողմից։

Միջավայրը ՝խմբասենյակ

Նյութերը՝ նկարներ,գլուխկոտրուկներ,դրոշ,զինանշան։

Պարապմունքի պլան

Առարկա՝Խոսքի զարգացում

Տարիքային խումբ՝3-4 տարեկաններ

Թեման ՝<<Հայաստանն իմ հայրենիքն է>>

Պարապմունքի տեսակը՝ զրույց-քննարկում

Նպատակները՝

- Ծանոթացնել և իրազեկել հայրենիքի քարտեզի,ՀՀ դրոշի,զինանշանի և քարտեզին։
- Զարգացնել երեխաների խոսքը
- Զարգացնել  խմբային աշխատանք կատարելու հմտություններ
- Աշխատանքն ավարտին հասցնելու կարողություն
- Երեխաների մեջ  դաստիարակել
  Սիրո և հպարտության զգացում
  Անհրաժեշտ պարագաներ
- Հայաստանի հանրապետության դրոշ
- Հայաստանի Հանրապետության խորհրդանիշների պաստառ
- Սպիտակ թուղթ,գունավոր մատիտներ,ջրաներկ,վրձիններ։

Խթանման փուլ

Առավոտյան երեխաների հետ հանդիպում-սիրելի երեխաներ պատմեք,թե մանկապարտեզ գալու չանապարհին ,ի՞նչ շինություններ տեսաք։Այն ամենը ինչ տսել եք մեր հայրենիքի մի թոքր մասն են կազմում։

Իմաստի ընկալման-երեխաները նստած են դեպի գրատախտակը,կիսաշրջանաձև.Ես գրատախտակին փակցնում եմ Հայաստանի բազմաթիվ տեսարժան և փոքրիշատե նրանց ծանոթ վայրեր,և նրանց խնդրում եմ պատմել իրենց ծանոթ վայրերի մասին իրենց ունեցած փոքր տեղեկությունները։

Հետազոտության վերջնարդյունք

Կպատմեն իրենց տեղեկությունները ցոցադրված նկարների շուրջ

Կստանան նոր հանձնարարությունր նկարելու համար

Կծանոթանան իրենց հայրենիքի պատմությանը

Իմ հետազոտության արդյունքում հասկացա որ ծնողները առավելագույնս աշխատում են երեխաների իրենց երկրի տեսարժան և պատմամշակութային վայրերին ծանոթացնելու համար։Ծնողների հետ որոշեցին հաչախ կազմակերպել էքսկուրսիաներ,և հարստացնել մեր երեխաների տեղեկությունները։

Ֆիզկուլտ դադար

Դաստիարակ

Երեխաներ Հայաստանը մեր բոլորի փոքրիկ անկյունն է այս աշխարհում,մեր տունը։Եվ ինչպես մենք ունենք մեր ծնողների սիրո,հոգատարության և պաշտպանության կարիքը,այնպես էլ մեր հայրենիքն ունի մեր կարիքը։

Այժմ երեխաներ մենք կծանոթանանք մեր դրոշին,որը երեք գույն ունի,

-Ի՞նչ են խորհրդանշում այդ գույները։

Կարմիրը-կակաչները,արյունը,ուրախությունը։

Կապույտը-երկինքը,ջրերը,լճերը։

Ծիրանագույնը-ցորենի հասկը,ծիրանը և այլն։

Իսկ հիմա մենք ստ ցանկության մատիտներով,կամ ջրաներկով կնկարենք մեր դրոշը։

Երեխաներին տրվում է ժամանակ աշխատանքն ավարտելու համար։Ավարտից հետո երեխաների հետ ամփոփում ենք օրվա պարապմունքի թեման,նոր ստացած գիտելիքները,երեխաների համար ընթերցեցի բանաստեղծություններ Հայաստանի մասին։

Հայաստանը
Իմ անունն է,
Ազգանունն է,
Ինձ ուժ տվող զորությունն է,
Իմ հինը և նորությունն է,
Իմ լեզուն է, այբուբենը,
ՈՒրիշ խոսքով՝ այն ամենը,
Որ կոչվում է հայրենի տուն...
Եվ այն տունն է,
Որ շինել է պապիս պապը
Անդուլ ջանքով
ՈՒ տանջանքով.
Քար է դրել քարի վրա,
Դար է դրել դարի վրա
Եվ քրտինքը թուխ ճակատին՝
Զուլել է նա պատը պատին։
Էլ ոչ մի հուր,
Էլ ոչ մի սուր
Չի մտնելու իմ նոր տունը,
Չի ջնջելու իմ անունը,
Ազգանունը,
Իմ լեզուն ու այբուբենը,
ՈՒրիշ խոսքով՝ այն ամենը,
Ինչը ամուր սյունն է իմ տան
Եվ միասին կոչվում է հայ
ՈՒ Հայաստան։
Եվ ես հիմա իմ տան պատին
Նոր-նոր քարեր պիտի դնեմ,
Նոր-նոր դարեր պիտի դնեմ,
Որ գնալով հզորանա,
Ծլարձակի ու նորանա,
Որ միշտ պահի իմ անունը,
Ազգանունը,

Իմ մայր լեզուն, այբուբենը,
ՈՒրիշ խոսքով՝ այն ամենը,
Ինչը կյանքն ու խորհուրդն է տան
Եվ միասին կոչվում է հայ
ՈՒ Հայաստան:
**Պատվական ԽԱՉԱՏՐՅԱՆ**

*ՀԱՅԱՍՏԱՆ*

Սա իմ երկիրն է-
չափերով այնպիսին-
որ կարող եմ վերցնել հետս,
թե մի հեռու տեղ գնամ:
Փոքրիկ՝ ինչպես ծերացած մայր,
Փոքրիկ՝ ինչպես նորածին զավակ
իսկ քարտեզի վրա
ընդամենը արցունքի մի կաթիլ…
Սա իմ երկիրն է – չափերով այնպիսին,
որ ազատորեն տեղավորել եմ սրտիս մեջ,
որ չկորցնեմ հանկարծ…

**Հովհաննես Գրիգորյան**

Հայրենիք

Մեր մեծ հայրենիք,

Ի՞նչ կա աշխարհում

Քեզնից անառիկ

Ու քեզնից սիրուն:

Սարե՛րդ՝ բարձրիկ,

Դաշտե՛րդ՝ անծայր,

Ձրե՛րդ՝ քաղցրիկ,

Արև՛դ՝ պայծառ:

Դու տվել ես մեզ

Ծաղիկ ու ծիծաղ,

Երգ, մանկապարտեզ,

Թե՛ ուսում, թե՛ խաղ:
Դու տվել ես մեզ
Թռիչքի թևեր,
Որ բարձրանանք մենք
Աստղերից էլ վեր:

Սարմեն Հարությունյան

## Եզրակացություն

Հայրենաճանաչողությունը կարևոր է մեր երեխաների դաստիարակության մեջ։Հայրենաչանաճողության դաստիարակության մեջ մենք կարող ենք հաջողության հասնել եթե համատեղենք մեր աշխատանքը ծնողների հետ։Մենք փորձի շրջանակում կնտրենք այն բոլոր գիտելիքները,որոնք հասու են նախադպրոցական տարիքի երեխաներին,ինչը կարող է ոգևորել ,և հպարտություն առաջացնել։

Երեխաները անցկացված զրույցի արդյունքում հասկացան որ Հայաստանն իրենց հայրենիքն  է,տունը որն իրենց սիրո և պաշտպանության կարիքն ունի։

Մեթոդիստի և տնօրենի դիտարկում

1. Դաստիարակը հասավ պարապմունքի նպատակներին,պարապմունքն անցավ հետաքրքիր միջավայրում,այն ուղղված էր երեխաների իմացական  և խոսքային ոլորտների զարգացմանը։
2. Երեխաներն իրենց շատ լավ էին զգում,և ուրախ էին նոր տեղեկություններ ստանալու համար։
3. ՈՒսումնասիվող թեման՝հայրենաճանաչողության դաստիարակությունը,շատ կարևոր թեմա է,և հենց նախադպրոցական տարիքի պետք է երեխաները ճանաչեն և սիրեն իրենց հայրենիքը։

Գրականության ցանկ


1. Բարոյական զգացմունքների կրթություն ավագ նախադպրոցականների մոտ/Էդ.Վինոգրադովա Ա.Մ.,-Մ.,1980։
2. Դաշնային օրենքը <<Կրթության մասին Ռուսաստանի Դաշնության >>Մոսկվա 2013թ.։
3. Երեխաներին դաստիարակել ժողովրդական մշակույթի ավանդույթների վրա/vatman v.p.,-Վոլգոգրադ 2008թ.։
4. <<Մայրենի լեզվի պարապմունքները մանկապարտեզի ավագ խմբում>>Ս.Չիբուխչյան,Լ.Սարգսյան։
5. Նախադպրոցական կրթություն ,FS ES Ռուսաստանի Դաշնության կրթության և գիտության նախարարության 2013թ. հոկտեմբերի 17-ի թիվ 1155 հրամանը։
6. <<Նախաշավիղ>>գիտամեթոդական հանդես։